

Հուլիսի 12-ին տեղի ունեցավ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կարգապահական կոմիտեի հերթական նիստը՝ ՀՖՖ Կարգապահական կոմիտեի նախագահ Ռուբեն Սինոյանի նախագահությամբ՝

ՈՐՈՇՎԵՑ՝

07/07/12թ. «Շենգավիթ»-«Բանանց-2» խաղը «Բանանց-2» թիմի կողմից չտեսագրելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 15-րդ հոդվածի 23-րդ կետի համաձայն՝ «Բանանց» ֆուտբոլային ակումբին տուգանել 30000 դրամ:

03/07/12թ. «Բանանց-1-2000»-«Ակադեմիա-1-2000» խաղին «Ակադեմիա-1-2000» թիմի ֆուտբոլիստ Սարգիս Նարգուզյանի հեռացման, ծեծկրտուքի համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ որակազրկել 2 խաղով, ՀՖՖ տեխնիկական կենտրոն-Ակադեմիային տուգանել 15000 դրամ:

03/07/12թ. «Բանանց-1-2000»-«Ակադեմիա-1-2000» խաղին «Բանանց-1-2000» թիմի ֆուտբոլիստ Արսեն Եղիազարյանի հեռացման, ծեծկրտուքի համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ որակազրկել 3 խաղով, «Բանանց» ֆուտբոլային ակումբին տուգանել 15000 դրամ:

01/07/12թ. «Թխաձոր-99»-«Գորիս-99» խաղին չգրանցված ֆուտբոլիստի (Արմեն Աղինյան) մասնակցելու համար, ՀՖՖ-ի մրցումների անցկացման մանկապատանեկան կանոնակարգի 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Բերդավանի գյուղապետարանին տուգանել 3000 դրամ:

«Անի-98» թիմի կազմում 15Բ003, 15Բ011, 15Բ014, 15Բ036, 15Բ038 խաղերում կեղծ փաստաթղթերով ֆուտբոլիստի (Դավիդ Հարությունյան) մասնակցելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնագրքի 18-րդ հոդվածի 13-րդ կետի համաձայն՝ «Անի-98» թիմին բոլոր հանդիպումներում գրանցել տեխնիկական պարտություն, ՀՖՖ-ի կարգապահական կանոնագրքի 18-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ «Անի-98» թիմի մարզիչ Վահրամ Օլեյանին որակազրկել մինչև 12.07.2013թ., ՀՖՖ-ի կարգապահական կանոնագրքի 18-րդ հոդվածի 14-րդ կետի համաձայն՝ «Անի-98» թիմին հանել առաջնությունից, Մարալիկի մանկապատանեկան մարզադպրոցին տուգանել 50000 դրամ:

«Օձուն-98» թիմի կազմում 15Բ008, 15Բ012, 15Բ013, 15Բ026, 15Բ035, 15Բ046, 15Բ052 խաղերում կեղծ փաստաթղթերով ֆուտբոլիստի (Արսեն Անթառանյան) մասնակցելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնագրքի 18-րդ հոդվածի 13-րդ կետի համաձայն՝ «Օձուն-98» թիմին բոլոր հանդիպումներում գրանցել տեխնիկական պարտություն, ՀՖՖ-ի կարգապահական կանոնագրքի 18-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ «Օձուն-98» թիմի մարզիչ Գևորգ Աղվանյանին որակազրկել մինչև 12.07.2013թ., ՀՖՖ-ի կարգապահական կանոնագրքի 18-րդ հոդվածի 14-րդ կետի համաձայն՝ «Օձուն-98» թիմին հանել առաջնությունից, Օձունի գյուղապետարանին տուգանել 50000 դրամ:

Մարալիկի մանկապատանեկան մարզադպրոցին տուգանքները ժամանակին չվճարելու (58000 դրամ) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնագրքի 10-րդ

հողվածի 2-րդ կետի համաձայն՝ Մարալիկի մանկապատանեկան մարզադպրոցին տուգանել 11600 դրամ: